



ՆՐՋԱՆԿԱՆԻԾՍՏԱԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿՆԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍՍԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

1938 թվականի ապրիլի 5-ի լույս 6-ի դի-
շերը վախճանվում է Խորեն Ա. հոգեւույս
կաթողիկոսը: Գեորգ սրբազանն ստանձնում
է Ամենայն Հայոց Հայրապետի տեղակալի
պատասխանատու պաշտոնը:

1941 թվականի ապրիլի 10-ին Ս. էջ-
միածնում գումարվում է ազգային-եկեղեցա-
կան ժողով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս
ընտրելու համար: Սակայն պատերազմի
պատճառով չէին կարողացել ներկա գտնվել
բոլոր թեմերի պատգամավորները, ուստի և
ժողովը որոշում է կաթողիկոսի ընտրությունն
ու օծումը հետաձգել բարեպատեհ մի այլ ժա-
մանակի, երբ կարելի կլինի ապահովել Սո-
վետական Միության և արտասահմանյան
թեմերի պատգամավորությունների լայն մաս-
նակցությունն ու Հայ Եկեղեցու նվիրական
կարգերի ու կանոնների համաձայն կատարել
կաթողիկոսական ընտրությունն ու օծումը:

Ազգային-եկեղեցական այդ ժողովը Գերա-
զույն Հոգևոր Խորհրդի նախագահող Գեորգ
արքեպիսկոպոս Չորեքյանին ընտրում է Ա-
մենայն Հայոց Հայրապետության ազգընտիր
Տեղակալ:

1941 թվականի ապրիլին գումարված ազ-
գային-եկեղեցական ժողովի ավարտումից
շատ շանցած, ինչպես հայտնի է, ֆաշիստա-
կան զորքերը հարձակվեցին Սովետական
Միության վրա: Հայրենիքին սպառնացող այդ
ծանր օրերին, Մայր Աթոռ Ս. էջմիածինը,

գլուխ ունենալով Գեորգ արքեպիսկոպոսի
պես մի խոհուն և անձնդիր հովիվ, ցուցաբե-
րեց հայրենասիրական բացառիկ գործունեու-
թյուն:

Այդ ճակատագրական օրերի շրջանից եթե
բաց անելու լինենք Գեորգ սրբազանի կյան-
քի ծալքերը, ապա իր հոգու ամբողջ վեհու-
թյամբ մեր առաջ կկանգնի աննկուն կամքով
օժտված, հայրենասեր, համեստ ու խելացի
ամենապատիվ Տ. Տեղակալի հիասքանչ կեր-
պարը: Պատկերացնելու համար իրոք նրա
մեծությունը, բավական է կարգալ Հայրենա-
կան պատերազմի տարիներին նրա հայ ժողո-
վրդին ուղղած հայրենասիրական կոնդակ-
ները, ուր նա կոչ է անում՝ մեկ մարդու պես,
նախնյաց սրբազան ու վեհ օրինակով՝ դիմա-
գրավել անագորույն թշնամուն՝ պաշտպանե-
լու ժողովրդի կյանքը, պատիվն ու իրավուն-
քը:

1944 թվականին հրապարակվեց Ամենայն
Հայոց ազգընտիր Տ. Տեղակալի հայրենասի-
րական կոչը ուղղված հայ ժողովրդին՝ «Մա-
սունցի Դավիթ» անունով տանկային շարա-
սյուն կառուցելու նպատակով միջոցներ հան-
գանակելու մասին:

«Իմ սիրելի ժողովուրդ,— ասված է կո-
չում,— դո՛ւ, որ պատերազմի սկզբից նվիր-
ված ես Հայրենիքիդ պաշտպանության և
ցանկացել ես տեսնել Հայրենական պատե-
րազմի վախճանը, դո՛ւ, որ միշտ հետևել ես
Ս. էջմիածնին, դու այնօր էլ անշուշտ առա-
տորեն կրեիս քո խնայողությունները, մաս-

* Ետունակված ամսագրի 1954 թվականի № X
VII—VIII-ից և X-ից:

նակցելով «Սասունցի Դավթի» անվան տանկային շարասյան կառուցման» («Կոչ հայ հավատացյալ ժողովրդին», «Էջմիածին», 1944 թ., հունվար):

Գեորգ սրբազանի հայրենասիրական այս նախաձեռնությունը լայն արձագանք գտավ ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ արտասահմանյան հայկական համայնքներում: Սփյուռքահայությունը հայրենասեր և անձնվեր հովվի կոչին պատասխանեց իր նվիրատվություններով. այդ սրբազան գործին իրենց արժանի լուսան բերեցին ԱՄՆ-ի, Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Կիպրոսի և այլ վայրերի հայ հոգևորականությունն ու հավատացյալները:

1944 թվականի հունվարին, հանդիսավոր պարագաներում, սովետական զորամասերին հանձնվեցին հայ հոգևորականության և հավատացյալների նախաձեռնությամբ կառուցված «Սասունցի Դավթի» շարասյան տանկերը, որոնք շուտով մեկնեցին ռազմաճակատ:

Հայ Եկեղեցու ցույց տված նյութական այս աջակցությունը, իհարկե, պատերազմական վիթխարի ծախսերի և ջանքերի ընդհանուր մասշտաբով անշուշտ օգնություն էր, բայց խոշոր էր նրա բարոյական նշանակությունը. այդ ծանր օրերին Հայոց Եկեղեցին ցույց տվեց իր վճռական և անվերապահ վերաբերմունքը Հայրենիքի նկատմամբ. նա առանց տատանվելու կանգնեց Հայրենիքի կողքին:

Սովետական կառավարությունը արժանավայել կերպով գնահատեց անձնվեր ու անխոնջ հովվի հայրենասիրական գործունեությունը. Հայրենական Մեծ պատերազմի և գերմանական Ֆաշիզմի դեմ մղված պայքարում ցուցաբերած եռանդուն ջանքերի համար Տեղակալ Գեորգ սրբազանը արժանացավ «Կովկասի պաշտպանության համար» մեդալին:

Ահա այսպես է սկսում իր գործունեությունը Տեղակալ Գեորգ սրբազանը հայ ժողովրդի համար վճռական նշանակություն ունեցող այդ եռուն օրերին: Մեղվի ժրջանությունամբ, տքնությունամբ, աշխատում է նա, աշխատում է առանց դադարի, առանց հանգրսուտի: Ականատեսներից մեկը այսպես է նկարագրում նրան այդ օրերին. «Ականատեսը միայն կարող է զգալ նրա գործի ծանրությունը և տեսնել նրա անսահման աշխատանքը: Նա և՛ քարոզիչ է, և՛ խրախուսող, և՛ ղեկավար, նա կարողանում է և՛ առօրյա խնդիրներին ընթացք տալ, և՛ իր բազմաթիվ այցելուներին բավարարել, և՛ միաժամանակ իր հիմնական աշխատանքները կատարել, էջ-

միածինը բարեկարգել, բարեզարդել, վանական կադրեր ընտրել, դաստիարակել և պետության հետ առնչվող խնդիրները լուծել և, որ գլխավորն է, վանքն ու եկեղեցիները պահպանելու և զարգացնելու համար նյութական տնտեսական բազա ստեղծել, միջոցներ հայթայթել: Եվ այս բոլորը կատարելու համար նա հարկադրված է նվիրել իր ամբողջ ժամանակը, աչքաթող շանելով հիմնականն ու կարևորը: Այդ բոլորը արվում է տուկունությամբ, բարեխղճությամբ և համբերությամբ:

Ե՛րբ է հանգստանում ամենապատիվ Տ. Տեղակալը և արդյո՞ք հանգստանում է: Ես այդ դեռևս չեմ կարողանում պատկերացնել: Մայր Աթոռում և Երևանում եղածս ժամանակ ես նրա հանգիստը շտեպս, շարունակ զբաղված, միշտ գրասեղանի առաջ, հեռախոսի կամ գրամեքենայի առաջ» (Ռուբեն վարդապետ, «Էջմիածինը», «Էջմիածին», 1944 թ., փետրվար-մարտ):

Այս բոլորից հետո Գեորգ սրբազանի համար հատկանշականն ու բնորոշն այն է, որ նա քրտնաջան ու համառ աշխատանքի գնով կամաց-կամաց, բայց հաստատակամորեն հասնում է իր որոշած նպատակներին:

1941 թվականի ապրիլին, Ս. Էջմիածնում հրավիրված ազգային-եկեղեցական ժողովի ընդունած որոշման համաձայն, ամենապատիվ Տ. Տեղակալը Մերձավոր Արևելքի թեմերը, Կիլիկիայի Կաթողիկոսական Տունն ու Երուսաղեմի Պատրիարքարանը այցելելու համար արտասահման է ուղարկում հատուկ պատվիրակություն՝ ազգային-եկեղեցական ժողովի համար նախապատրաստական աշխատանք կատարելու: Այդ առթիվ ամենապատիվ Տ. Տեղակալը գրում է. «Մեր հավատացյալները մեծ հեռանկարով են նայում առաջիկա ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքների վրա և բոլորն էլ համոզված են, որ այդ ժողովը կարևոր դեր պիտի ունենա մեր եկեղեցական պատմության մեջ: Ժողովրդի հույսերն արդարացնելու համար անհրաժեշտ է նախապատրաստական ամեն տեսակ աշխատանք կատարել, որպեսզի մեր թեմերն իրենց լավագույն ներկայացուցիչներն ուղարկեն ազգային-եկեղեցական ժողով: Առաջիկա զարմանք աշխարհի ամեն կողմից Ս. Էջմիածին պիտի հավաքվեն մեր Եկեղեցու հոգևորական և աշխարհական լավագույն ներկայացուցիչները և վերացնեն սեբողջ Հայրապետական Գահից:

«Նրանք իրենց աչքով պիտի տեսնեն Մայր Աթոռը, պիտի տեսնեն Մայր Հայրենիքը, պիտի համբուրեն Ս. Էջմիածնի սրբությունները և պիտի անեն բոլոր հնարավորը ամ-

բացնելու համար Մայր Աթոռի կապը Սփյուռքի հայութեան հետ» («Էջմիածին», 1944 թ., նոյեմբեր-դեկտեմբեր):

Այս ժամանակ է, որ Գեորգ սրբազանին հաջողվում է ստանալ Հայկական ՍՍՌ կառավարության թույլտվությունը՝ բանալու Հոգեվոր Ճեմարան: Մինչ այդ, Ամենայն Հայոց Հայրապետությունն արդեն սկսել էր հրատարակել իր պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը:

Մայր Աթոռի միաբանության նոսրացած շարքերը, Գեորգ սրբազանի ուշիմ ջանքերով, համալրվում են նախկին Գևորգյան Ճեմարանն ավարտած մի շարք նոր դեմքերով:

1945 թվականի ապրիլին ամենապատիվ Տ. Տեղակալը հանդիպում է ունենում ՍՍՌԿ Ժողովուհուրի նախագահ Ի. Վ. Ստալինի հետ և զրույց ունենում Հայ Եկեղեցու գործերի մասին: Ամենապատիվ Տ. Տեղակալին հաջողվում է Մայր Աթոռի անցյալում ունեցած փաստական մի շարք արտոնություններին իրավական բնույթ տալ և լուծել Մայր Աթոռին վերաբերող կարևոր հարցեր:

1944 թվականի վերջերում, երբ քաղաքական դրությունը փոքր-ինչ բարելավվել էր, Մայր Աթոռ Ա. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշում է 1945 թվականի հունիսի 16-ին գումարել համազգային-եկեղեցական ժողով՝ օրակարգ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը և մի շարք եկեղեցական կարևոր հարցերի քննարկումն ու լուծումը:

Ամենուրեք մեծ ցնծություն է ընդունվում հայրապետական ընտրության լուրը: Հայկական բոլոր թեմերն ու համայնքները խանդավառ ողջունում են կայանալիք հայրապետական ընտրությունը Ս. Էջմիածնում:

1945 թվականի հունիս ամսին Մայր Հայրենիքի և Սփյուռքի բոլոր ծայրերից, Հայոց Եկեղեցու հնամենի օրհնքների համաձայն, նվիրական Ս. Էջմիածին են հավաքվում հայ հավատացյալ ժողովրդի աշխարհիկ և կրոնական պատգամավորները: Ժողովի մասնակիցները ներկա են գտնվում լրիվ ներկայացուցչական կազմով, որ բացառիկ երևույթ է մեր Եկեղեցու պատմության մեջ:

1945 թվականին գումարված ժողովը աննախընթաց էր իր միասնականությանը. այդ միասնականությունն արտահայտվեց ամենից առաջ նրանում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը մասնակցում էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը անձամբ, իր եպիսկոպոսներով և աշխարհիկ անդամներով: Ժողովին մասնակցում էին նաև Երուսաղեմի ամենապատիվ Պատրիարքը, Կոստանդնուպոլսի Պատրիարքական տեղապահը, բազմա-

թիվ եպիսկոպոսներ, թեմակալ առաջնորդներ, քահանաներ և աշխարհիկ ներկայացուցիչներ:

Հունիսի 16—22-ը Ս. Էջմիածնում շարունակվում են համազգային-եկեղեցական ժողովի աշխատանքները: Հայ հավատացյալի համար խնդրության, անհուն բերկրանքի անմոռաց օրեր էին այդ օրերը:

Ազգային-եկեղեցական ժողովն ունեցավ իր մի շարք հաջորդական նիստերը: Ժողովում լավեց Ամենայն Հայոց ազգրետիր Տեղապահ Գեորգ արքեպիսկոպոս Զորեքչյանի ղեկուցումը վերջին 4 տարվա ընթացքում Հայ Եկեղեցու կատարած գործունեության մասին, որին տրվեց միաձայն հավանություն: Եկեղեցական ժողովը լսեց ու քննարկեց նաև մի շարք այլ եկեղեցական հարցեր:

Բավական է թերթել այդ օրերին ամենապատիվ Տ. Տեղակալի կարգացած ղեկուցադրերը, հասկանալու համար, թե նա մտքի ինչպիսի՞ իմաստուն ըմբռնումով արմատական հարցեր է առաջ քաշել:

Ահա այդ ղեկուցադրերի ենթագլուխները.

1. Ս. Էջմիածինը և Հայրենական Մեծ պատերազմը.
2. Ս. Էջմիածինը և Հայրապետական պատվիրակությունը.
3. Հայ Եկեղեցու սահմանադրությունը.
4. Հայ Եկեղեցու բարեկարգության խընդիրը.
5. Արտասահմանի և Սովետական Միության մեջ Հայ Եկեղեցու վիճակը.
6. Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան.
7. Ս. Էջմիածնի տպարանը.
8. Մեր այցելությունը կենտրոնական իշխանության.
9. Ս. Էջմիածնի միաբանական կազմը.
10. Ս. Էջմիածնի բարձր հոգևոր իշխանության վարած դիժը.
11. Ազգային-եկեղեցական ժողովի գումարման հարցը.
12. Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը.
13. Առաջարկներ ժողովին.
14. Ս. Էջմիածնի տնտեսական ապահովության խնդիրը.
15. Հայրապետական Աթոռի փոխադրության 500-ամյա հոբելյանը:

Ավելորդ է այստեղ հիշել մեկ առ մեկ, թե ինչպիսի ազգօգուտ որոշումներ կայացրեց ժողովը, ինչպիսի խանդավառ մթնոլորտ էր սիրում ժողովականների միջև: Ժողովականների հայացքները այդ օրերին, շնորհակալության և երախտագիտության ջերմագին զգա-

ցումներով, ուղղված էին ազգընտիր ամենապատիվ Տեղակալին: Ամեն կողմից ողջունում էին նրան, բոլորի հիացմունքի առարկան Տեղակալ Գեորգ արքեպիսկոպոս Զորեքչյանն էր— այդ աննահանջ, հոգնութուն լիմացող մարդը:

Հունիսի 22-ին Մայր Տաճարում գումարվեց համազգային-եկեղեցական ժողովի ընտրական նիստը, որին նախագահում էր Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսը: Ժամը 3.30-ին, երդման հանդիսավոր արարողությունից հետո, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ավանդական նվիրական կանոնների ու սովորույթների համաձայն, տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը:

Ժամը 4.45-ին Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսը հայտնում է քվեարկության արդյունքը. Գեորգ արքեպիսկոպոսը 110 քվեով, միաձայն, ընտրվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ականատեսներից մեկը հետևյալն է պատմում այդ սրտառուչ և խորհրդավոր ընտրության. «Մահահարությունների և կեցցենների որոտը թնդացնում է հինավուրց Տաճարի դմբեթները: Ամենապատիվ Գեորգ արքեպիսկոպոսը հուզված է, արցունքները ողողել են նրա դեմքը: Հուզված են գրեթե բոլոր պատգամավորները. շատերի աչքերն լցված են բերկրանքի և ցնծության արցունքներով» («Էջմիածին», 1945 թ., հունիս-հուլիս):

1945 թվականի հունիսի 24-ին տեղի ունեցավ նորընտիր Կաթողիկոս Գեորգ Զ.ի օժման փառաշուք հանդեսը: Հանդեսին, բացի եկեղեցական ժողովի մասնակիցներից, ներկա էին նաև բազմաթիվ հյուրեր ոչ միայն Սովետական Հայաստանից, այլև հեռավոր հայկական գաղութներից. ներկա էր Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչը, Քենտրբերիի ավագերեց Հյուպետտ Ջոնսոնը:

Կաթողիկոսական միաձայն ընտրությունը մի անգամ ևս վկայեց այն մասին, թե ինչպիսի՛ լայն ժողովրդականություն և հմայք է վայելում նորընտիր Կաթողիկոսը ժողովրդական լայն զանգվածների և նրանց ընտրյալ ներկայացուցիչների մոտ:

Եվ այդ նվիրական օրվանից Լուսավորչի Գահի վրա տեսնում ենք բազմած արժանընտիր Հայրապետին, ժողովրդի ընտրյալին՝ Գեորգ Զ. Կաթողիկոսին:

1945 թվականի հունիսի 25-ին տեղի ունեցավ ազգային-եկեղեցական ժողովի վերջին նիստը, որին նախագահում էր Գեորգ Զ. նորընտիր Կաթողիկոսը:

Ժողովի վերջում Նորին Ս. Օծութունը Իր շնորհակալության խոսքն ուղղեց ժողովավականներին և ասաց. «Այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձած մեր մեջ, որի համար պիտի աղոթեմ, որ այն մշտնջենական դառնա: Տեսա Ձեր բուռն զգացմունքը դեպի Ս. Էջմիածինը; և դեպի մեր սիրելի Հայրենիքը, որ բարձր վերելքներով փառավորվում է: Պիտի աղոթեմ Հայրենիքի և պետության զարգացման համար: ...Օրհնում եմ Ձեզ բոլորիդ, օրհնում եմ հայ ժողովրդին, որ Ձեզ նման խոհական ներկայացուցիչներ ընտրեց» («Էջմիածին», 1945 թ., հունիս-հուլիս):

Հայ հավատացյալը մի անգամ ևս ցույց տվեց իր անխախտելի կապն ու հավատը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ազգային-եկեղեցական ժողովում ընդունված ու ձևակերպված որոշումների կատարումը, առաջին իսկ օրվանից, դարձան նորընտիր Վեհափառ Հայրապետի մտախոհության առարկաները: Պատասխանատվության ամենախոր գիտակցությունը էր, որ նա ստանձնեց իր պաշտոնը: Վեհափառ Հայրապետն Իր անդրանիկ կոնդակում անդրադառնալով իր պարտականություններին, գրում է. «Ամենայն Հայոց Հայրապետի կոչումս, ազգային-եկեղեցական ժողովի կատարյալ վստահությունը և հավատացյալ հոտիս ոսկեվառ ակնկալությունները խորապես հուզում են սիրտս և ճնշում հոգիս՝ զգացնելով ինձ պարտականությանս ու պատասխանատվությանս ծանրությունը: Սարսուռ եմ զգում հիշելով ծանր պարտականությունները և բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողանամ արդյոք, ծերությանս հասակում, խղճի մտոք կատարել պարտքս»:

Վարուց ի վեր կարիք էր զգացվում Հայոց Եկեղեցու համար ձեռնհաս և կարող եպիսկոպոսների: Վեհափառ Հայրապետի առաջին քայլը իր օժոմից հետո լինում է եպիսկոպոսական ձեռնադրությունը. հուլիսի 1-ին Մայր Տաճարում, ամենայն հանդիսավորությամբ, տեղի է ունենում եպիսկոպոսական ձեռնադրություն. Հայ Եկեղեցու աչքի ընկնող և արժանավորագույն 10 վարդապետներ ստանում են եպիսկոպոսական աստիճան:

Նորընտիր Վեհափառին մտատանջող ամենալուրջ հարցերից մեկը— Հոգևոր Ճեմարանի կազմակերպման հարցն էր: Գեո ազգային-եկեղեցական ժողովին իր տված զեկուցման մեջ Վեհափառը նշում էր. «Ս. Էջմիածիները, որպես համայն հայության հոգևոր կենտրոն, պիտի ունենա բավարար թվով կուսակրոն հոգևորականություն և քահանայություն: Հոգևոր դաս պատրաստող հաստատությունը Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանն էր, որ դադարել է գոյություն ունենալ 1917 թվից, որի հետևանքով մեծ կարիք է զգացվում թե՛ կուսակրոն հոգևորականության և թե՛ քահանայության, մանավանդ միութենական ներքին թեմերում և Մայր Աթոռում: Այսօր ի մխիթարություն բոլորիս, կարող եմ հայտարարել, որ դժվարագույն խնդիրներից մեկը լուծվել է, և լուծվել է հիմնական կերպով և օրինական եղանակով. Ս. Էջմիածինի իրավունք է տրված Հոգևոր Ճեմարան ունենալ: Ծնորհիվ Սովետական իշխանության հոգածու և բարյացակամ վերաբերմունքի տրամադրված է մեզ նախկին Մատենադարանը, որպես Ճեմարանի շենք, վերանորոգված և հարմարեցրած Ճեմարանի համար: Այլև Ճեմարանի պահպանության դժվարություններն մեծ մասամբ լուծել է մեր կառավարությունը՝ խոստանալով Ճեմարանին անհրաժեշտ աջակցություն ցույց տալ և արդեն արձակել է Ճեմարանի համար կահ կարասիք: Այս հիմնական աշխատանքը կատարելուց հետո, թվում է թե իրավունք ունեմ ասելու՝ ես իմ պարտքս կատարեցի: Պատկանելի ժողովիդ է մնում Ճեմարանի տնտեսական ապահովության կարիքը հոգալ» («Էջմիածին», 1945 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր):

Չնայած եկեղեցական ժողովում մասամբ հոգացվում են նոր բացվելիք Հոգևոր Ճեմարանի տնտեսական ծախքերը, բայց դեռ մեծ աշխատանք էր մնում կազմակերպելու: Վեհափառ Հայրապետի ամենօրյա հետևողական աշխատանքի և ձեռնբեցություն շնորհիվ, 1945 թվականի նոյեմբերի 1-ին տեղի է ունենում Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի հանդիսավոր բացումը: Հոգևոր Ճեմարանը ապահովված էր ուսուցչական կազմով և օժտված գիշերօթիկի բոլոր հարմարություններով (ճաշարան, ննջարան, գրադարան և այլն):

Չնայած ձեռք բերված առաջին հաջողություններին, Վեհափառ Հայրապետը երբեք

չէր դադարեցնում Իր ամենօրյա հոգացողությունը Հոգևոր Ճեմարանի տնտեսական և ուսումնական խնդիրների նկատմամբ: Հոգևոր Ճեմարանը միշտ էլ մնում է Նրա գուրգուրանքի և սիրո առարկան:

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ օրերից, Նրա խնդիրն է լինում կարգավորել Սովետական Միության և սփյուռքահայ թեմերը: Արդեն տեսանք, որ եպիսկոպոսական ձեռնադրությամբ Նա որոշ շափով ապահովեց թեմերը առաջնորդ եպիսկոպոսներով: Սակայն նորընտիր Կաթողիկոսի գահակալությունից հետո, նոր ի նորո վերաբացվեցին բազմաթիվ եկեղեցիներ, որոնք ապահովվեցին նորընծա քահանաներով, մի քանի վանքեր ունեցան իրենց վարդապետ վանահայրերը:

Ընտրելով նախկին Գևորգյան ճեմարանավարտ և Ներսիսյան դպրանոցի շրջանավարտ սաներ, Վեհափառը Մայր Աթոռի նվազած միաբանության թիվը հասցրեց մինչև 11 հոգու: Իհարկե, այս բոլոր միջոցառումները կատարվում էին մինչև որ նորաբաց Հոգևոր Ճեմարանը տար իր շրջանավարտները:

Վեհափառ Հայրապետի այս շրջանի մտածմունքի առարկան էր նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնական վերանորոգության խնդիրը:

Տաճարի վերանորոգության նախնական աշխատանքները սկսելու համար նորընտիր Հայրապետը, Իր ընտրությունից մի քանի ամիս անց, հրավիրում է հեղինակավոր հանձնաժողով՝ կազմված Սովետական Հայաստանի ականավոր դիմքերից ու մասնագետներից: Հանձնաժողովը քննության առնելով Մայր Տաճարի վերանորոգության խնդիրը, նշում է այդ ուղղությամբ կատարվելիք անհրաժեշտ աշխատանքները: Հետագայում հինգ մասնագետներից կազմված ենթահանձնաժողովը, մանրամասն ուսումնասիրելով Տաճարի վերանորոգության կապակցությամբ կատարվելիք աշխատանքները, կազմում է նախազգծման տվյալները և հաշիվները: Իսկ Վեհափառ Հայրապետի կողմից շարունակվում էին բանակցությունները՝ արտասահմանյան մեծահարուստ հայերի միջոցով հոգալու հնադարյան նմանը շունեցող հրաշալի կոթողի վերանորոգման ծախսերը:

(Շարունակելի)